ևոբիչևը յայտարարել էիք որ յառաջիկայ Օգոստոս ամսիս վերջերը յոբելիական հանդէսով տօնելու էիք հարիւր տարիի հասակ ունեցող Ձերդ ամսօրեայ հանդէսի դարաձարձի օրը։ Այրիլին էլ մի երկտողով ինձ հրաւէր կարդացիք որ չի մոռանամ լինելիքը և մի բանով ես էլ բերեմ իմ մասնակցութիւնը։

Հաշուելով մնացեալ վերջիշեցի որ վերապատուելոյ Մխիթարեանց հետ իմ էլ բարեկամութեան վաթսունհինգերորդ տարին է և մտովի վերապրեցայ իմ առաջին գալը Վենետիկ և իմ առաջին հանդիպումը Ս. Ղազար վանքում, այն և յետագայ տասնեակ տարիներ Մխիթարի Ոչխարին մի բաւական շարք մը պատկառելի Հայրերը, մանաւանդ յոբսահոգի Հայր Ղեւոնդ Ալիշանը, որուն հետ միասին ես առաջ մի գեղեցիկ գործ կատարել էի Հռոմում, Վատիկանի մատենադարանում ուր արտանկարեցի բիւզանդական Վասիլ կայսեր սեպհականութիւնը եղած մի monologion-ի պատկերազարդից մեր Հռիփսիմէի և Գայիանէի նահատակութիւնը ներկայացնող ոգող պատկերները, ապա և մեր Գրիգոր Լուսաւորիչը և այլ մեկ երկուսը մանր բաներ, ամենն էլ գոյներով և որոնք յոյս տեսան մեծագայլող հարազատութեամբ անմոռանալի Հ. Ղեւոնդի անմոռանալի «Այրարատի» մէջ քիչ յետոյ...։

Այս էր 1888-ին, որմէ յետոյ 1889-ին, 1890-ին և 1891-ին ամբաւ ամիսներ ես նորից նոր ուխտի գնացողի պէս եկայ Վենետիկ 23-25 ամեայ խանդավառ նկարչի իմ ուսուցմասիրութիւնները լրացնելու այդ երազ քաղաքի մէջ և մոռնացայ վերածնութեան տիտանական վարպետների գործերի հետ։

Հայր Ղեւոնդը դեռ 1888-ին իմ Ձեր վանքը այցելելու օրերում ինձ ծանօթ պահելու համար Գրչագիրների մէջ ձեռօք եղած հարուստ պատկերազարդին հետ՝ բազմիցս ցոյց տուաւ ինձ Վ. Մխիթարեանց սեպհականութիւնը եղող 2000-ից աւելի հին ձեռագիրների հաշաթաժոյն և նրանց մէջ իր ամենաչատ սիրած միաբանների պատկերները, և հաւատացած որ մի օր ես առանձնապէս կը նուիրուէի յատկապէս հայ հին զրքերի գեղարուեստին ուսումնասիրութեան, թելադրութիւններ արաւ (2)։ Յետոյով յուսահոգիին խանդավառութիւնը և այս տեսակ բաները նորից նոր աշխարհք բերելու փափաքը և մենակութիւնը, ես հաճոյքով դրի ես ինձ նրա տրամադրութեան տակ և 3 տարի ամառնային արձակուրդի օրերուս տրամադրեցի իրեն, և քանի-երեսուն իւր ամենաչատ սիրած բաներին արտանկարեցի իւր նախասիրած բաներից Ձերդ վանքում Ձերդ գրչագիրների հաշաթաժոյից։ Կը սիրեմ հաշատալ որ Ս. Ղազարու վանքում իրենց օրերը մեր ազգի հանճարի պանծացման համար մատաղ բերած յոբսահոգիների յետ մահու թողունների գեղերը երբ ուզէք քրքրել, այդ իմ գործերը կը գտնէք։

Հայր Ղեւոնդը քանիցս ուզեց իմ կատարած գործի համար ընդունել դրամ՝ որպէս փոխ աշխատավարձ. այդպիսով ես ինքն իրեն մի քիչ թերեւցած պիտի զգար. բայց ես մերժելով մերժեցի և խնդրեցի չանել այդպիսի առաջարկ, ինքն ամբողջ կեանքով մեզ նուիրուած և մեզ համար վաստակած Հ. Ղեւոնդը։ Նա նրանից խնդրեցի միայն մի քանի անգամ յատուկ նստել իմ դիմաց և թող տալ ինձ իւր դիմապատկերը նկարել պատուռի վրայ իւղաներով. ես չի մերժեց խնդիրքս և 1891-ին երբ մեկնելու էի Իտալիայից գարնան վերջ՝ եկայ Ձեր Վենետիկը դարձեալ, մնացի 3 շաբաթի չափ և Ձերդ վանքում, իւր սենեակի մէջ նկարեցի ամենոսանալի մեծ մարդու դիմապատկերը։

Յետագային, մինչեւ 1895-ի ամառը երբ չաչողուեց ինձ մնայուն կացարան ունենալը, ես այդ դիմապատկերը առանձնաբար յանձնել էի Վիեննայում Պարսից Շահի դեսպան և ինձ մեծ բարեկամութիւն ցոյց տուած Նա-

2. Այս տողերու ընդգծումը մեզմէ, ցոյց տալու համար որ հոն այդ բառերուն մէջ Ֆէթվաճեան կ'ուզէ հակադնել կրած տպաւորութիւնները իր տպագայ նկարչի ուղղութեան համար։

բիանի–խան Լենինգրադեանին, երբ կեանքի դէպքեր տարին դեռ շատ երիտասարդ աշխատաւորս մինչեւ Ռուսաստանի մայրաքաղաք Ս. Պետերբուրգ, ուր մնացի մինչեւ 1903. բարեկամաբար Դարիանի խանին էլ կորուցի քանի նա կեանքի դժբախտ պարագաների հետեւանքով գնացել քաշուել էր Ֆրանսայի գաւառական մի քաղաք և այն տեղ էլ մեռել։ Զգիտնալով դիմապատկերի ինչպէս լինելը և չկարողանալով ձեռք բերել աւելի ծանօթագրութիւն, ես երկար տասնեակներ տարիներ հատնել էի իմ ձեռագործը դիմապատկերը կորուցած։ Այսպէս եղածը երբ մեկ միտքս կու գար կ'ափսոսայի և կը սգայի, բայց ինչպէս կը լիներ չգիտեմ, մեկ մեկ էլ կը յուսայի որ իմ պաշտելի Հ. Ղեւոնդի դիմապատկերը որ տեղից էլ լինի պիտի գտնուեր մի օր։

Թուականիս մի 8 տարի առաջ Ձերդ միաբանակից մի Հօր հեղինակութիւնը եղող բանասիրութիւնների մի հատոր երբ հասել էր Բոսրոն, բարեկամներից մեկը ձեռք բերելով այն պատահաբար կարդալիս հանդիպել էր և մի պոռնա վերնագրած «Հայր Ղեւոնդ Ալիշանի դիմապատկերին դիմաց». գործ նկարիչ Ա. Ֆէրվաճեանի։

Զգիտենալով ոչինչ եղածին պատմականից՝ երբ ինձ հարցուց թէ ո՞րը էի նկարել Հ. Ղեւոնդ Ալիշանի դիմապատկերը և իմացաւ թոլոր եղածը, ձեռքս սեղմեց և աւետեց բարեյաջող ուղը։ Կարող էր երեւակայել այդտեղ իմ հոգեկանը երբ ես յիշելով այդ պատկերի կորուցուած լինելուն պատճառով 40 տարի իմ սուգը և յետոյ այս գիւտի ինձ առթած հրաձուքը։ Իմ ձեռաց գործը ոչ մի միայն չէր կորուցուած, այլ և գտնուում էր իրեն աւելիից աւելի վայելուչ տեղ՝ Ս. Ղազարու վանքը, Հ. Ղեւոնդ Ալիշանի հարազատների տանը։ Փառք տուի Աստուծոյ և նոյն օրն իսկ նամակով դիմեցի Վ. Հայր Փէյիկեանին, խնդրելով մի ընդունիր յայտնեցի և խնդրեցի որ ազդակցութիւնս յայտնեցի և ուղարկեց փափեանուռ թանգութիւնից՝ անյապաղ ինձ յայտնի լինելիք ժամանակ մասին և հոգայ այդ դիմապատկերը արտատպել տալ գունաւոր և ինձ ուղարկէ...։

Ողբացեալ Ա. Ֆէրվաճեան բախտը չունեցաւ դժբախտաբար իր վերահաս մահուամբ՝ տեսնելու վերստին իր գործը։ Յաւետեան գաղտնիք մը մնաց իրեն թէ ինչպէս այդ նկարը անցած է մեր ձեռքը։ Ազգային մը Ֆրանսայի մէջ նուէր ըրած է զայն Հ. Վահան Վ. Յովհաննէսեանի՝ որ հեղինակն է այդ բանաստեղծութեան, որուն կ'ակնարկէ Ֆէրվաճեան իր վերեւ հրատարակուած նամակին մէջ։

Այս առթիւ կը հրատարակենք հոս մեծագիր՝ երիտասարդ Ա. Ֆէրվաճեանի սրտին այնքան գուրգուրալի Ալիշանը, որ կը խօսի ու կը հմայէ իր մեծ խորհողի և մեծ քերթողի խորաթափանց աչքերով։

Հ. Մ. Ճ.

Ս. ՂԱԶԱՐ

Ով Սուրբ Ղազար, անտառ բանի, դպրութեան՝
Բարձրացած վեր՝ Մխիթարեան սուրբ հունէն,
Դուն միշտ օրհնեալ պարտէզ մ'ես այսքան տաեն
Եւ մեր հոգւոյն մէջ քու մերգերդդ կ'երգեն։
Դուն չեմ՝ ցայտած Լուսաւորչի ձէթէն հին՝
Ջահեցիր ցարդ հայութիւնը ըՍփիւռքի...
Հայաստանէն բերուած բուռ մը հող ոսկի
Որ կենսահիւթ տալիր անոյշ մեր լեզուին։
Մեսրոպեան ամպ՝ օտար երկնի մէկ թաւին՝
Քրիստահիզեզ անձրեւեցիր մեզ մատեան...
Մեր միտքերուն տեղացիր դու վարդ բուրեան,
Ու պարպեցիր մեր գանձերը օտարին...
Մշակներու սուրբ օրօրոց, և փեթակ
Խորըսխրուած միտքի մեղրով գրչութեան,
Դուն կը հեւաս մեզի համար յաւիտեան
Եւ կը բաշխես մեզ քու ամբարդ անյատակ...
Ներանձնացման ով դու թաղար Թանկագին,
Ուր փթթեցան Բագրատունին, Ալիշանն
Ու քամեցին բաժակն իրենց հրաշուշան
Անմահական սեղանին վրայ մեր ազգին...
Ով Սուրբ Ղազար, մագաղաթեայ ծանրը խոյր,
Աբրիական ծովէն բուսած հայ գոհար,
Քու անկիւնէդ՝ մեր Մայր երկրին ժպտէ յար
Եւ լուսաձեմ անոր ճակտին տուր համբոյր...

Զ. ՊԼՊՈՒԼ

digitised by A.R.A.R.@